№ 81 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 22

1889

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 22 № 81

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատմական գրականութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շամախուց. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրիտէ կղզու ազգաբնակութիւնը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարիզից.

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I

Անցեալը պէտք է ուսումնասիրել, պատմական կեանքի ուսումնասիրութիւնը կըրթիչ ազդեցութիւն ունի,—ահա այն սովորական դատողութիւնները, որ միշտ և ամեն կողմից լսվում է։ Այդ դատողութիւնները, պէտք է ասել, ինքն ըստ ինքեան, տեսականապէս, սխալ չեն, և մի և նոյն ժամանակ համակրութեան արժանի դատողութիւններ են։ Սակայն որպէս զի մի ժողովուրդ ուսումնասիրէ իր անցեալը և որպէս զի այդ անցեալը կարողանայ կրթիչ ներգործութիւն ունենալ մի ժողովրդի վրա, որ ապրում է, հարկաւոր է որ այդ անցեալը, կամ ուրիշ խօսքերով, պատմական կեանքը իր զանազան կողմերով դուրս բերված լինի փոշու տակից, հանված լինի վարագոյրի ետևից, և մատչելի լինի ներկայ սերունդներին և նրա ուսումնասիրութեանը....

Արդ, ինքն ըստ ինքեան մի հարց է առաջ գալիս. արդեօք ունենք մենք մի այդպիսի անցեալ, որ մաքրված լինելով հնութեան փոշիներից և հանված լինելով պատմական վարագոյրի ետևից, կարողանայ մատչելի լինել, և կրթիչ ներգործութիւն ունենալ այն ժողովրդի վրա, որը ձգտում է իր անցեալի ուսումնասիրութեանը, ցանկանալով իր անցեալ պատմութեան լաւ և վատ էջերի ազդեցութեան տակ կրթել իր զգացմունքները և մշակել իր հայեցակէտերը։

Ոչ, կը պատասխանենք մենք. անցեալ պատմական կեանքի մի այդպիսի ուսումնասիրութիւն մենք չունենք. ուրեմն և մեր պատմութիւնը չէ կարող այն կրթիչ և մեծ նշանակութիւնն ունենալ մեր ժողովրդի համար, ինչ որ նա՝ տեսականապէս նայելով հարցի վրա՝ պէտք է ունենար։ Եւ այդ տխուր ճշմարտութեան ամենամեծ ապացոյցն այն է, որ մենք չունենք պատմական գրականութիւն, այսինքն գրականութեան այն ճիւղը, որը զբաղված լինելով պատմական կեանքի ուսումնասիրութեամբ, պարզէր այդ կեանքի զանազան կողմերը, բացատրէր պատմական շրջաններում տեղի ունեցած երևոյթների սկզբնապատճառները և հետևանքները, ջոկէր կրթիչ նշանակութիւն ունեցող պատմական փաստերը այն բոլորից, ինչ որ միայն վատ զգացմունքներ և սխալ հասկացողութիւններ կարող է մոցնել ժողովրդի մէջ, և այլն և այլն։

Ճշմարիտ է, մենք ունենք անցեալ, բայց չունենք այդ անցեալի պատմութիւնը։ Մենք պարծենում ենք, որ հայոց պատմութիւնը իր սկիզբն առնում է նոյն իսկ առասպելական շրջաններից՝ նոյի ժամանակից, մեր թթու աղգասէրները մինչև անգամ երեխայական սնափառութեամբ՝ ոտքի տակ տալով պատմութեան ճշմարտութիւնները՝ սիրում են հաւատացնել, որ Ադամը և Եւան, Նոյը և իր թոռները հայերէն էին խօսում,—բայց չը նայած այդ բոլորին, չը նայած հայ պատմութեան այդքան հնութեանը, և նրա յաջորդ շրջանների երկարատևութեանը, հայոց պատմական կեանքն այն կերպարանքով, ինչ կերպարանքով նա այժմ է ներկայանում մեզ, շատ միակողմանի և անբովանդակ է և այդ պատճառով զուրկ է այն կրթիչ և մեծ ոյժից, որը պէտք է ունենար այդ պատմական կեանքը՝ ներկայի և ժամանակակից սերունդների համար։

Դրա պատճառը, կրկնում ենք, այն է, որ մենք չունենք մեր անցեալի պատմութիւնը, այդ բառի լայն նշանակութեամբ, և մեր գրականութիւնը զուրկ է այն ճիւղից, որը կոչվում է պատմական գրականութիւն, և որի միջոցով միայն կարելի էր ժողովրդին ծանօթացնել իր անցեալի հետ, այդ անցեալի ազդեցութիւնը նրա վրա տարածելու համար։ Եւ ճշմարիտ, ինչ է ներկայացնում իրանից մեր այժմեան պատմական գրականութիւնը, եթէ միայն պատմական գրականութիւն անունը կարելի է տալ մեր քանի մի տասնեակ հատոր պատմական գրքերին, և կարելի է արդեօք այդ մի քանի տասնեակ հատոր պատմական գրքերով ծանօթանալ պատմական կեանքի հետ, և զգալ այն կրթիչ ազդեցութիւնը՝ որը պէտք է ունենայ անցեալի գիտակցական և բարեխիղճ ուսումնասիրութիւնը։ Մենք մեր հին մատենագիրների վրա կանգ չենք առնի, քանի որ մեր հին մատենագիրները, սկսած նոյն իսկ չորրորդ դարուց մինչև մեր պատմական կեանքի վերջին դարերը, ընդհանրապէս ներշնչված լինելով կրօնական հասկացողութիւններով, անտես են առել ժողովրդի կեանքի շատ կողմերը, և արձանագրելով միմիայն իշխանների և կաթողիկոսների անձնական կեանքը, մի առանձին նիւթ մեր պատմական այժմեան գրականութեանը չեն կարող մատակարարել։ Մեր հին մատենագիրները միմիայն մի յայտնի աստիճանի հում նիւթ կարող են մատակարարել պատմական գրականութեան և անցեալի ուսումնասիրութեան համար, որից տարաբաղդաբար զուրկ է մեր այժմեան գրականութիւնը։

Հարկաւոր է միայն աչքի տակով անցկացնել մեր գրականութեան մէջ եղած բոլոր այն աշխատութիւնները, որոնք մեր պատմութեանն են վերաբերում, և այդ ժամանակ հեշտ կը լինի համոզվել այդ տխուր ճշմարտութեան մէջ։ Մեր նոր գրականութեան մէջ պատմական գրականութեան և հայոց պատմութեան հիմքը դրել են Մխիթարեանները՝ հայր Չամչեանի մեծ աշխատութեամբ։ Չամչեանից յետոյ այդ միաբանութեան շատ անդամներն են գրել հայոց պատմութիւն, բայց այդ բոլորը ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ համառօտութիւն հայոց հին մատենագիրների հաղորդած չոր ու ցամաք տեղեկութիւնների, թէ այս ինչ թագաւորին յաջորդեց այն ինչ թագաւորը և թէ այս ինչ իշխանը դաւաճանեց այն ինչ թագաւորին և կամ կռիւ գնաց մի ուրիշ իշխանի դէմ։ Մխիթարեաններից դուրս լոյս տեսած պատմական գրքերն էլ նոյն կերպարանքն են ունեցել. թէ կ. Պոլսում և թէ ռուսահայերի մէջ վերջին 40—50 տարվայ ընթացքում լոյս են տեսել բաւական թիւով հայոց պատմական գրքեր, բայց ամենքն էլ նոյն չոր ու ցամաք բովանդակութեամբ, և զուրկ լուրջ և քննական ուղղութիւնից։ Այդպէս են եղել և հայոց պատմութեան բոլոր դասագրքերը՝ որոնց մէջ ամենալաւը՝ Աբովեանի հայոց պատմութիւնը, այդ ուղղութիւնից համարեա թէ հեռու չէ գնացել։ Եթէ կանգ չառնենք պրոֆէսօր Մկրտիչ Էմինի և հանգուցեալ պրոֆէսօր Գերասիմ Պատկանեանի մի քանի քննական աշխատութիւնների վրա, որոնք գլխաւորապէս գիտական բնաւորութիւն ունեն, այն ժամանակ համարեա թէ չի մնայ մի գրքը, մի պատմական աշխատութիւն, որի վրա կարելի լինէր մատնանիշ անել, մանաւանդ այնպիսի աշխատութիւններ, որոնք քննական բնաւորութիւն ունենալով, ձգտում լինէին պարզել հայոց պատմութեան մութ էջերը և ցանկանալի բանալ ժամանակակից հասարակութեան առաջ պատմական կեանքի այն շերտերը, որոնք յիրաւի կարող են զարգացնող, կրթիչ և դաստիարակիչ ազդեցութիւն ունենալ։

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Յուլիսի 4-ին

Քանդված Շամախու աղքատ բնակիչներին այժմ միակ զբաղեցնող հարցը, 1889 թուականի 3. ական բ. նշանակված հարկի փոխարէն, 8—40 ռուբլու պահանջն է իւրաքանչիւր ընտանիքից։ Այդ աչքի ընկնող զանազանութեան պատճառը իբր 1888 թուին շատ թուրքերից չը ստացված հարկն է, որը նորից բաժանել են բնակիչների՝ առաւելապէս հայերի վրա, որի պատճառով այսօր փողոցների այս և այն անկիւններում խումբ խումբ կանգնած, ամենքը այս բանի վրա են մըտածում։ Այդ առիթով այնպիսի դէպքեր են պատահում, որ ժողովուրդը վերջապէս վճռել է իշխան կառավարչապետին մի աղերսագիր ուղարկել և սպասել նրա արդար վճռին։ Այդ բաներին, մեր կարծիքով, այստեղ էլ վերջ կարելի էր տալ, եթէ իւրաքանչիւր ծուխ, իր բաժին հարկը մէկ անգամ իմանալով, ինքն ժամանակին յանձնէ գանձարանին, իսկ պարտազանցը տուժէ, ինչպէս արդէն այդ օրէնքը գործադրում են Ռուսաստանի ինքնավարութիւնից զուրկ քաղաքներում։ Այդ միջոցը աւելի նպատակայարմար է, քան առանց այն էլ խեղճացած ժողովրդին խաղալիք դարձնել զանազան անբարեխիղճ կեղեքողների ճանկերում...

Այստեղի երիտասարդութիւնը կատարեալ անշարժութեան մէջ է։ Ոչ մի բարի ձգտում, ոչ մի նոր գաղափար չէ առաջնորդում և չէ էլ հետաքրքրում։ Նախադահական աթոռի վրա նստած էր կոնդրէսի պատուաւոր նախագահ պ. Ժիլ Սիմոն, իսկ նրա չուրջը, էստրադայի (բարձրութեան) վրա նստած էին մեծ մասամբ կանայք և օրիորդներ՝ թէ կարգադրիչ մասնաժողովի անդամուհիները և թէ ուրիշ երկիրներից կոնդրէսին մասնակցելու համար եկած պատգամաւոր կանայք։ Այդտեղ նստած էին կարգադրիչ մասնաժողովի նախագահուհի տիկին Կեօխլին-Շվարց, որը յայտնի է իր գործունէութեամբ թէ բարեգործական հիմնարկութիւններում և թէ մանկավարժութեան մէջ, ապա տ. տ. Բօժըլօ և դը-Վէրնէյլ (փոխ-նախագահուհիները), տ. Մարի Լօրէն, տ. Էմիլի դը-Մօրսիէ (քարտուղարուհին) և այլն։ Օտար ներկայացուցիչների թւում երևում էին՝ տ. Կովալէվսկայա (Սոկհօլմի համալսարանի մաթեմատիկայի պրոֆէսօրը), տ. Պարրէն (կանանց իրաւունքը պաշտպանող յունական լրագրի խմբագիրը), օրիորդ Պոպլէն, բելգիական համալսարանի իրաւաբանութեան դոկտոր և Բրիւսէլի փաստաբան, և այլն։ Կանանց թւում կային շատերը, որոնք թղթակիցների պաշտօն են վարում այլ և այլ լրագիրներում։ Առհասարակ, բացի Ֆրանսիացի կանանցից, որոնք մեծամասնութիւն էին կազմում դահլիճում, կային բազմաթիւ իգական ներկայացուցիչներ հետևեալ երկիրներից՝ Անգլիայից, Շոտլանդիայից, Իրլանդիայից, Հնդկաստանից, Ամերիկայից, Բելգիայից, Հոլլանդիայից, Շվեդիայից, Դանիայից, Շվեյցարիայից, Աւստրիայից, Ֆինլանդիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Իտալիայից, Յունաստանից, Բրազիլիայից և Սպանիայից։

Նիստը բացեց նախագահ պ. Ժիլ Սիմոն, կարճ կերպով ծանօթացնելով ժողովականներին կոնդրէսի նպատակի հետ։ Նա ասեց որ կոնդրէսը նպատակ չունի ձգտել կանանց քաղաքական իրաւունքները ձեռք բերելուն, այլ կոնդրէսի գործունէութեան շրջանը աւելի համեստ և սահմանափակ կը լինի. կոնդրէսը պէտք է զբաղվի իգական բարեգործական հաստատութիւններով, կանանց բարոյական վիճակով, մանկավարժութեամբ և իգական արհեստաւորաց դպրոցներով, կանանց համար հասարակութեան մէջ մատչելի դեղարուեստներով և գործնական պարապմունքներով (գիտութիւն, արհեստ, դեղարուեստ, վաճառականութիւն և այլն) և վերջապէս քաղաքացիական օրէնսդրութեան (Legislation civile) այն կէտերի քննադատութեամբ, որոնք վերաբերում են կանանց իրաւունքներին և կանանց վիճակին զանազան երկիրներում։ Ապա Ժիլ Սիմոն խօսեց յատկապէս Ֆրանսիացի կնոջ վերաբերմամբ, մեծ յարգանքով վերաբերվելով դէպի Ֆրանսուհին և ջրելով այն բոլոր ամբաստանութիւններն ու մեղադրանքները, որ առհասարակ, բարձում են Ֆրանսիացի կանանց վրա, անուանելով նրանց՝ փչացած և անբարոյական... Ժիլ Սիմոն պնդում է որ Ֆրանսուհին վերին աստիճանի բարոյական է, ազգասէր է, անձնուէր և անձնազոհ է։ Նա յիշեցնում է թէ վերջին Ֆրանս-գերմանական պատերազմի և Պարիզի պաշարման ժամանակ որքան անձնազոհ, անձնուէր և հերոսաբար վարվեց Ֆրանսուհին... Միայն այնտեղ, որտեղ կինը այդքան ազդասէր է, անձնազոհ է և պատրաստ է իր կեանքը զոհել իր ազգի համար, աւելացրեց Ժիլ-Սիմոն, կարելի է յուսալ որ ազգը կը լինի քաղաքականապէս զօրեղ և անկախ... Այնուհետև Ժիլ-Սիմոն կարճառօտ կերպով յիշում է այն պակասութիւններն ու հակասութիւնները, որոնցով լի է Ֆրանսիական քաղաքացիական օրէնսդրութիւնը՝ և որոնք կազմում են կնոջ արժանաւորութեան դէմ՝ վերաւորանքների և անարգանքների մի ամբողջ շարք...

Ժիլ-Սիմոնից յետոյ խօսեցին՝ կոնդրէսի քարտուղար, փաստաբան պ. Բեօրկըլէ, Պարիզի VIII շրջանի թաղապետը (maire), և տ. տ. Իզաբէլ Բօժըլօ և Էմիլի Մօրսիէ։ Տիկին Մօրսիէ ինքն շվեյցարուհի է, բայց վաղուց է արդէն ապրում է Պարիզում։ Նա կոնդրէսը կազմակերպող կանանց ընկերութեան-ողին է և նոյն իսկ կոնդրէս կազմակերպող գլխաւոր ոյժն է... Այդպէս ազատ խօսող, այդքան ճարտարախօս, այդ աստիճան լոգիկական, խելացի խօսող, այդքան հեռանդով և մի և նոյն ժամանակ այդքան դեղեցիկ խօսող՝ նա ոչ թէ միայն կանանց մէջ չեմ լսել, բայց

քրքրում նրան։ Ընթերցանութիւնից այնպէս են խոյս տալիս, ինչպէս ժանտախտից են փախչում։ Շաբաթը մի անգամ բացվող գրատուն-ընթերցարանի դուռը հազիւ մի քանի այցելուներ է ընդունում իր մէջը։ Միայն «քէֆն» է, որ գերի է դարձրել դրանց բոլորին։ Ցանկալի կը լինէր, որ տեղիս ուսուցչական խումբը, որքան իր ոյժերը թոյլ են տալիս, աշխատէր մի փոքր ներգործութիւն ունենալ այդ տեսակ երիտասարդների մտաւոր և բարոյական բարեփոխութեան գործի վրա։

Հայերը այստեղ աննշան տեղ են բռնում և առևտրի մէջ։ Մետաքսագործութիւնը, այդեգործութիւնը, առաջնակարգ մթերքների թէ արդիւնաբերութիւնը և թէ նրանց վաճառելը նոյն իսկ հայերի թաղում, ամբողջապէս թուրքերի ձեռքին են։ և հէնց այդ է պատճառը, որ այստեղի թուրքերը գրեթէ տեղն ու տեղը նստած են, իսկ հայերը ամեն տարի գաղթում են Բաքու, գանգատվելով թէ գործ չը կայ մեր քաղաքում։ Հայերի թաղից մի նշանաւոր մասը այժմ թուրքերի ձեռն է անցել. վերջապէս թուրքերը կատարելապէս տիրել են թէ քաղաքի առևտրին և թէ բնակութեանը։ Այդ բոլորը աչքի առաջ ունենալով, մարդս ակամայ մտածում է. մթթէ չամախեցի հայն էլ չը պիտի մի օր իր «խէրն ու չառը» ճանաչի ու քննադատաբար վերաբերվելով իր կեանքի հարցերին, թողնի, ինչպէս իրանք են ասում՝ «փոր չը կշտացնող» պարապմունքները ու օդուտ քաղի երկրի աւելի արդիւնաւէտ հանգամանքներից։ Շամախին դեռ լայն ասպարէզ է ներկայացնում գիւղատնտեսութեամբ պարապողների առաջ։ 5—6 տարի առաջ մի տեղացի հայի ձեռնարկած այգեգործութեանը ամենքը մինչև օրս էլ հաւանութիւն են տալիս, բայց և այնպէս՝ միւսները կարծես թիլիսիմով են կաչկանդված։ Եթէ այդպէս է՝ էլ ինչու ենք գանգատվում մեր վիճակից։

Հայր Մակար վարդապետ Բարխուդարեանցի քարոզները այստեղ լաւ տպաւորութիւն են թողել ամենքի վրա։ Ամենքը վերին աստիճանի գովասանքով են վերաբերվում դէպի նրա քարոզները։ Ինչպէս պատմում են, եկեղեցին միշտ լի է եղել երկու սեռի ունկնդիրներով։ Այժմ անհամբեր սպասում են շամախեցի հայերը իրանց քարոզչի վերադարձին։ Առհասարակ մի քարոզչի պահանջ վաղուց ունի Շամախին։

Տեղիս չուկայում, մանաւանդ փողոցներում շրջող մրգավաճառների քարոզները վերին աստիճանի անկանոն դրութեան մէջ են. ով ինչպիսի փողոցային քար ասէք վերցնում ու հաւատացնում է թէ սա այսքան կամ այնքան կշիռ ունի։ Ռուսաց արշինը գոյութիւն չունի այստեղ, իսկ եղածին նոյնպէս հաւատալով են մի որոշ չափի տեղ ընդունում։

Խաղողի այգիներից առատ բերք է սպասվում այս տարի, իսկ ցորենի բերքը լաւ չէ։ Հունձերը սկսված են։ Մէկ օր առաջ քաղաքի հիւսիսային կողմից մեծ թիւով մորեխ եկաւ ու անցաւ. առ այժմս չը գիտենք որ կողմը արշաւեց մորեխը։

Այս տարի Բաքուից այստեղ ամարանոց եկողների թիւը բաւական շատ է։ Եղանակները հով են։ Շարունակ տեղացող անձրևները նոր են դադարել։ Դաշտերը դեռ կատարեալ գարնան կանաչով են զարդարված։

Ս. Ս.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Ցուլիսի 11-ին

Ցուլիսի 10-ին, երեկոյեան $8^1/_2$ ժամին մի օդերևոյթ լուսաւորելով երկինքը հարաւ-արևելքից՝ կայծակի արագութեամբ ընթացաւ գիշերային հրապուրիչ հորիզոնի ամբողջ տարածութեամբ. այդ լուսաւոր երևոյթը սկիզբն առաց հարաւ-արևելեան կողմից ու աստիճանաբար աւելի և աւելի պայծառանալով՝ սլացաւ մինչև հեռաւոր արևմուտքը, դէպի Մասիսի գագաթը։ Դա այնպիսի մի աքանչելի օդերևոյթ էր, որի նմանը մեր կողմերում տեսնված չէր. տեսարանը, որը առաջացաւ այդ երևոյթից գիշերային պահուն, երբ երկնակամարի վրա բիւրաւոր աստղեր էին փայլում, հրաշալի ու դուրեկան էր։ Ժողովուրդը սարսափի մէջ է. նրա կարծիքով մի որ և իցէ ահարկու նշանաւոր դէպք է պատահելու մօտիկ ապագայում։ Պէտք է աւելացնել, որ ահա մի քանի ամիս է որ մեզանում սարսափելի չոքեր են լինում. կարծես Աֆրիկայի աւազոտ անապատների կիզիչ չոքերը իրանց բոլոր աւերիչ չորութեամբ Նախիջևան են տեղափոխվել. ցերեկով բաց երկնքի տակ մի երկու ժամ շրջելը համարեա անտանելի է դարձել, չը տեսնված չոքերի պատճառով. երբեմն երբեմն այնպիսի տաք քամի է փչում, որից ծառերի տերևներն են թափվում։ Հին-Նախիջևանը իր շրջակայ գիւղերով շրջապատված է մերկ լեռնաշղթաներով, որտեղից փչող տաք քամիները ակամայ յիշեցնել են տալիս այս կամ այն անմարդաբնակ երկիրը, եթէ աչքի չընկնեն համեստ պարտէզները և այգիները, որոնք այս կամ այն գիւղին պատկանելով՝ մարդուներկայութիւնն են մատնանիշ անում։ Մոռացանք յիշել որ նկարագրած երևոյթի նախկին երկու օրը զգալի փոփոխութիւն տեսնվեց չոր օդում, ամպերը ծածկեցին երկինքը և թուլացրին չոքերի ազդեցութիւնը։

Շոքերը ջրերի զգալի կերպով պակասելուն պատճառ դարձան. այստեղ ներկայումս ջրի սով է զգացվում. գիւղացու բամբակը չորանում է. ջրի համար ծագած կռիւները ամենօրեայ երևոյթներ են այստեղ. ջրից օգտվում են գիւղերում մի քանի տղրուկ գիւղացի աղաներ և աղդեցիկ վաշխառուներ, իսկ մեծամասնութիւնը բաւականանում է վշտաբեկ սրտով արտասուք թափելով, երբ տեսնում է, որ իր միակ յոյս ցանած բամբակը չորանալու վրա է, իսկ ինքն էլ ջրից օգտվելու իրաւունքից զուրկ է անկանոն ջրաբաժանութեան շնորհով։ Նա առաջարկում է ջրատէր գիւղացուն ջրել իր ցանքը ու արդիւնքի կէս մասը վերցնել, իսկ ջրատէրերը դրանով ևս չը բաւականանալով, երկու մասը իրանց՝ մէկ մասը ցանքատէրերին են խոստանում... Կալերը սկսվել են. ցորենը ծեծվում է, հացահատիկները առատութեամբ են վարձատրում գիւղացուն։ Ցորենի գինը զգալի կերպով ընկաւ Նախիջևանում, բայց պէտք է ասել, որ այս տարի շատ աննշան քանակութեամբ է ցորեն ցանվել. հողերի մեծ մասը բամբակով է զբաղված, հետևաբար կարելի է ասել, որ ցորենի գինը կարող է դարձեալ բարձրանալ ու նախկին գնով վաճառվել։

Ա. Տ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թաւրիզ, յուլիսի 1-ին։

Հաճեցէք խնդրեմ, ճշմարտութիւնը երևան հանելու համար, սոյն երկտողիս մի անկիւն չնորհել ձեր լրագրի մէջ։

Թաւրիզի հայոց առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Միսիթարեանցը «Մշակ» լրագրիդ № 69-ի մէջ տպված իր նամակով ճգնում է իսպառ ուրանալ Նոր-Ջուղայեցի պ. Գալուստ Վարդանեանին իր ուղղած նամակը՝ իր սեպհական ստորագրութեամբ ու անուանական կնքով վաւերացրած։ Ստեփաննոս եպիսկոպոսի այդ տեսակ պարսաւելի վարմունքը ուրիշ որ և է նպատակ չունի, բացի պ. Հ. Առաքելեանցին անուանարկելը։ Իբրև վկայ և ականատես, կրկնում եմ, որ Ստեփաննոս եպիսկոպոսի պ. Գ. Վարդանեանին գրած յիշեալ նամակը գոյութիւն ունի և ինձ հետ շատերը քանիցս անգամ տեսել ու կարդացել են։ Բացի դրանից, պ. Վարդանեանի խնդրանքը ես թէ այդ նամակի և թէ ուրիշ երկու նամակների պատճէնները ընագրից արտագրելով, ես յանձնեցի պ. Հ. Առաքելեանին, որը պ. Վարդանեանի առաջարկութեան համեմատ նրանց հրատարակութիւն պիտի տար։

Մարտիրոս Նաղարբէկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լօնդոնից մեզ գրում են. «Մի անդղիական յանձնաժողով կազմուած է Լօնդոնի մէջ, որպէս զի աշխատեն Հայոց խնդրին համար. յանձնաժողովի անդամներն անդղիական երեսփոխաններն են։ Առանց մէջ են պ. Գրայս, պ. Սըմբրա՝ գանձապետ, պ. Մընտէլա՝ նախկին կրթական նախարար Կլադստոնի նախարարութեան մէջ և այլն։»

—

Մեզ հաղորդում են, որ Կողբի կողմերում նորերս հայերի մէջ կրօնափոխութեան շատ դէպքեր են եղել և շարունակում են լինել։

—

Կիեվի լրագիրները հաղորդում են, որ սրանից յետոյ թոյլ չը պիտի տրվի Կիեվի I գիւղի հրէայ վաճառականներին իրանց խանութներում մէկ հրէայ գործակատարից աւելի ունենալու. մնացած գործակատարները քրիստոնեայ պէտք է լինեն։

—

Տեղական ռուս լրագիրները լուր են ստացել Էջմիածնից, որ յուլիսի 10-ին վախճանվել է սինոդի նախանդամ Թաղէոս եպիսկոպոսը, Շամախու թեմի նախկին առաջնորդը։

—

Անդրկովկասեան երկաթուղու Թիֆլիսի վարչութեան մէջ մի երկու ամսից ՝ի վեր տենդային կենդանութիւն է տիրում. փոչու տակից բոլոր գործերը դուրս են բերված, և ահագին քանակութիւն թուղթ և թանաք է սպառվում. այդ բոլորի պատճառն այն է, որ օդոստոսի սկզբին երկաթուղու գլխը վերջնականապէս պէտք է անցնի գանձարանի ձեռքը, ուստի և այժմեան վարչութիւնը ուզում է բոլոր գործերը կարգի բերել, իբրև ապացոյց իր գործունէութեան։

—

ԱՐԴԱՀԱՆԻՑ մեզ գրում են. «Յունիսի 29-ին, երեկոյեան ժամը 6-ին իշխան կառավարչապետը ժամանեց Արդահան։ Իշխանի ուշադրութիւնը գրաւեց կօզակների գնդերի զօրախաղը, որ շատ աջող անցաւ։ Միւս օրը, առաւօտեան, իշխանը ացելեց զինուորական հիւանդանոցը, որից յետոյ իշխանը պատուեց տեղական զօրքի գնդապետ իշխան Միքելաձէին՝ յայտնելով նրան իր խորին շնորհակալութիւնը։»

—

ՆՈՐ-ԽԱՉՄԱԶ գիւղից մեզ գրում են. «Ներկայ տարվայ ապրիլ ամսից սկսված մինչև այսօր Նոր-Խաչմազ գիւղում բնակվող բժիշկ Միքայէլ Զալիեանց մեր գիւղի հիւանդներին օգնութիւն է հասցնում ձրիաբար, առանց վարձի։ Այժմ մերձակայ թուրք գիւղերից զանազան տեսակ հիւանդներ են բերում Խաչմազ գիւղը, որոնց և բժիշկը օգնութիւն է հասցնում նոյնպէս առանց վարձի։ Այդ վարմունքը շնորհակալութեան արժանի է և ցանկալի, որ պ. բժիշկը իր օգնութիւնը աւելի շատ գիւղերի վրա տարածէր։»

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Որովհետև մեր նորընտիր երեցփոխը չը հաստատվեց իր պաշտօնի մէջ, այս վերջերս նոր ընտրութիւն պէտք է լինի։ Ընտրութիւն պէտք է լինի և հոգաբարձուների, որովհետև մեր ուսումնարանների հոգաբարձուները վերջնականապէս հրաժարվել են և անկարող են զգում իրանց այդ պաշտօնի համար։ Մեր ուսումնարանական գործերը այնքան խառնված են, որ մեզ հարկաւոր են խելացի հոգաբարձուներ, որպէս զի անցեալի սխալները ուղղելով հանդերձ՝ ունենան գործ կատարելու ընդունակութիւն։ Այստեղի օրիորդաց դպրոցը հազիւ թէ բացվի այս տարի։»

—

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Երկու տարուց աւելի է, ինչ որ Զանգեզուրում գոյութիւն ունէր մի աւազակային խումբ, որը իր արած աւարով և եղեռնագործութիւններով մեծ սարսափ էր զցել անզէն բնակիչների վրա։ Զանգեզուրի զաւառապետ Սուչչեվսկի, իր պաշտօնը ստանձնելով, առանձին ուշադրութիւն դարձրեց այդ ա-

---

վստահութեամբ կարող եմ ասել, որ տ. Մօրսիէի պէս պերճախօսները տղամարդկանց մէջն էլ շատ հազւագիւտ են։ Նրա խօսքը սահուն է, համոզիչ է, ուժեղ է և ոգեորիչ։ Ես տեսայ ժողովականների թիւում մի քանի տղամարդկանց, որոնք զգացվեցան... Նրանց աչքերին արտասուք երևաց, այն աստիճան ոգեորիչ էր տ. Մօրսիէի խօսքը... Ամեն բան ներդաշնակվում էր այդ տաղանդաւոր կնոջ մէջ. մտքի ոյժը, համոզմունքի հաստատութիւնը, արտայայտիչ, դուրեկան դէմքը, անվրդով հայեացքը և մեղմ, դեղեցիկ, ներդաշնակ, գրեթէ երաժշտական ձայնը... Երբ կանանց իրաւունքների այդ համակրելի և եռանդոտ պաշտպանը վերջացրեց իր ճառը,—յափշտակված ունկնդիրներով լի դահլիճը թնդաց անվերջանալի ծափահարութիւններով։

Օտարազգի պատգամաւորների ճառախօսութիւններից յետոյ (որոնց թւում կային՝ յոյն, իտալացի, աւստրիացի, ամերիկացի, ռուս, անգլիացի, բելգիացի, լեհացի և այլ ատենաբան կանայք), նախագահը յայտնեց որ կօնգրէսը կը բաժանվի հետևեալ 4 սեկցիաների վրա. 1) Philanthropie et morale (մարդասիրութիւն և բարոյականութիւն), 2) Pédagogie (մանկավարժութիւն, որտեղ մտնելու է և արհեստաւորաց իդական դպրոցների հարցը), 3) Գեղարուեստ, դիտութիւն և գրականութիւն և վերջապէս 4) Քաղաքացիական օրէնսդրութիւն (որտեղ կը քննվի կնոջ հասարակական վիճակը անչափահաս լինելու ժամանակ, կնոջ և մայր դառնալու ժամանակ և վերջապէս առևտրով և արդիւնաւորութեամբ զբաղվելու ժամանակ)։

Նոյն իսկ այդ հարցի մասին, պ. Բեօրդըլէ մի գեղեցիկ դասախօսութիւն արաւ կօնդրէսի հետեւեալ օրվայ նիստին։ Պարոնի դասախօսութիւնը կրում էր «La femme et le code civil» վերնագիրը։ Առանց չափազանցնելու, առանց ճռճռան ֆրազների, համեստ և խելացի կերպով՝ ճառախօսը ներկայացրեց իր լսողներին փաստերի մի շարք և իր հարուստ իրաւաբանական հմտութիւնների օգնութեամբ համոզեց լսողներին որ կինը Ֆրանսիայում կատարելապէս անարգված է օրէնսդրութիւնից։ Թէև ֆրանսիական քաղաքացիական օրէնսդրութիւնը լաւ է, ասեց դասախօսը, քանի որ նրա մէջ մտան ֆրանսիական մեծ յեղափոխութեան բոլոր սկզբունքները, բայց դարձեալ նա քննադատութեան արժանի է այն կէտերում, որոնք վերաբերվում են կնոջ իրաւունքներին։ Կինը Ֆրանսիայում արտաքուստ միշտ յարգված էր, բայց հասարակութեան մէջ ոչինչ օրինական նշանակութիւն չունէր. մարդը միշտ տէր էր, իսկ կինը՝ ստրուկ։ Թէև 1791 թւի օրէնսդրութիւնը հաւասարացրեց երկու սեռերի իրաւունքները, սակայն Դիրեկտորիայի, բայց մանաւանդ Նապոլէոն I-ի ժամանակ, կանայք կրկին կորցրին իրանց իրաւունքները։ Նապոլէոնը արհամարհում էր կնոջ և ամեն ջանք գործ դրեց որպէս զի կնոջ համար նպաստաւոր կէտերը ֆրանսիական օրէնսդրութեան մէջ՝ ջնջվեն և կինը կրկին կորցնի այն իրաւունքները, որ ձեռք էր բերել յեղափոխութեան ժամանակ։ «Code Napoléon» ասված օրէնսդրութիւնը իսկապէս Նապոլէոնի ստեղծագործութիւնը չէ, այլ գրված է եղել ֆրանսիական յեղափոխութեան նշանաւոր ղեկավարների ձեռքով. Նապոլէոնը միմիայն աղաւաղեց այդ օրէնսդրութիւնը և ապա մկրատեց նրան իր անունով։ Եւ ինչ որ լաւ է այդ օրէնսդրութեան մէջ,—յեղափոխութեանն է պատկանում, իսկ ինչ որ վատ է,—Նապոլէոնին։ Նապոլէոնը սաստիկ պաշտող և հետևող էր հռոմէական օրէնսդրութեան, իսկ հռոմէական քաղաքացիական օրէնսդրութիւնը ճանաչում է կնոջ մէջ մտաւոր ստոր յատկութիւններ, մինչև անգամ յատկացնում է նրա մտաւոր կարողութիւններին imbecilitas անունը (բթամտութիւն)։ Նոյն կարծիքի էր կնոջ մասին և Նապոլէոն I։ Մինչև այժմ կանայք Ֆրանսիայում չունեն դատարաններում ու նոտարիուսների մօտ վկայութեան և օտար մանուկների վրա խնամակալութեան իրաւունք, այն ինչ նոյն իրաւունքները վաղուց է արդէն որ վայելում են իտալացի կանայք։ Մթթէ զարգացած, կրթված, ինտելիգենտ կինը աւելի պակաս է հասկանում, պակաս ազնուութիւն ունի, քան մի որ և է անկիրթ մանրավաճառ, բանւոր կամ դռնապան տղամարդը։ Կինը չէ կարող նրամանապէս հոգաբարձու լինել։ Վերջին ժամանակները ֆրանսիացի դատաւորները ճարատված ստիպվեցան թոյլ տալ որ կինը էկսպերտ կանչվի դատարաններում,—այն էլ կանանց զգեստների, զարդերի, գլխարկների, կօշիկների և այլ այդ տեսակ առարկաների վերաբերմամբ... Դա էլ մի քայլ է դէպի առաջ։ Այժմ պատգամաւորների ժողովի երկու անդամները, պ.պ. Լըֆէվր և Իվ Գիւօ (որը այժմ հասարակաց աշխատանքների մինիստր է) մի օրինագիծ մշակեցին, որով կանայք իրաւունք պէտք է ունենան խնամակալ և հոգաբարձու լինելու և կը ներկայացնեն իրանց այդ պատրաստած նախագիծը ֆրանսիական պարլամէնտին։ Ցայտնի է որ ամեն երկիրներում ծնողները կարող են վայելել երեխաների կայքերի եկամուտները, մինչև որ երեխաները անչափահաս են. բայց հայրը չէ կորցնում այդ իրաւունքը, եթէ այրի լինելով՝ նորից պսակվում է, այն ինչ մայրը, եթէ այրի լինելով՝ նորից պսակվում է,—նա անմիջապէս կորցնում է իր առաջին զաւակների կայքերի եկամուտներից օգտվելու իրաւունքը։ Իսկապէս կինը ազատ է միայն մինչև ամուսնանալը, իսկ հէնց որ պըսակվում է, նա կորցնում է իր բոլոր քաղաքացիական իրաւունքները։ Կինը, Ֆրանսիայում, չէ էլ կարող կառավարել իր կայքերը, այլ պէտք է յանձնի իր իրաւունքները իր ամուսնուն։ Բայց եթէ մարդը վատ է կառավարում, վատնում է կնոջ կայքերը, կինը ինչ պէտք է անի.... Նա իրաւունք չունի դանգատվել դատարանին իր մարդու դէմ, որովհետև պսակված կինը դատարանին

ւաղակախումբը ցրվելու վրա։ Այդ միջոցին խումբն անցաւ Արաքս գետից դէպի Պարսկաստան, այնտեղ գործելու համար։ Այժմ տեղեկութիւն կայ, որ հրոսակապետ Խսկանդարը սպանված է Պարսկաստանում, նոյն իսկ իր ընկերներից։ Զանցաւ մի քանի օր և ահա նրանց ընկեր Լաթիֆին էլ Սիսիանում բռնելով, բերեց յանձնեց գաւառապետին Զանգեզուրի առաջին բաժնի պոլիցիական պրիստաւ Սաղըդ-բէկ Մելիք-Աղանօվը։»

—

ԱՐԴՈՒԻՆԻՑ մեզ գրում են. «Հայ-կաթոլիկների դպրոցներում, տարաբաղդաբար, մինչև այժմ տեղ են բռնում շատ անարժան դասատուներ։ Ինչպէս տղայոց դպրոցների համար ընտրված են տիրացուներ, աղջկերանց դպրոցների համար էլ ընտրված են մայրապետներ։ Մայրապետները (կոյսեր են) ընդունակ են լաւ ձեռագործութիւններ պատրաստել, որ և սովորեցնում են իրանց սանուհիներին, իսկ գալով ուսման մասին, մեթոդին, կարգ-կանոնին,—ցաւօք սրտի պիտի խոստովանել—որ ամենաանկատար տեղեկութիւն ունեն։ Կարեորութիւն կայ հմուտ վարժուհիներ հրաւիրելու, բայց դա ոչ ոք չէ զգում.... թէև ծախսվում են ահագին դումարներ, բայց նորաւարտ, ճակատը ոսկեզարդ աշակերտուհին, որ 14 դարունք հաղիւ է տեսած լինում և անյապաղ ընդունում է ամուսնական լուծը իր ծնողների կամքի համեմատ, բռնի կամ ծածուկ, մի «բարեւագիր» գրել հաղիւ-հաղ է գիտենում։ Ուսումնարաններ յաճախող սանուհիները մեծ մասամբ նշանված են արդէն,—5—6 տարեկան եղած ժամանակ նշանում են և 15—16 տարին անցած օրիորդը այստեղ «նստած աղջիկ», պառաւած է համարվում։ Արզուինում օրիորդները չափազանց ամաչկոտ են և չունեն ազատութիւն տղամարդկանց հետ նիստ ու կաց անելու, մանաւանդ ամուսնանալուց յետոյ, իսկ առաջին տղաներքից յետոյ էլ ենթարկվում են մինչև մահը թիւրքական սարկական վիճակին։ Փողոցում մի անծանօթ, ընդհանրապէս լաւ շորեր կրող մարդուն հանդիպող արզուինցի կինը միշտ նամէ հրամութիւն պէտք է անէ. եթէ չար ունի՝ երեսին է քաշում, եթէ չունի՝ երեսը, կուրծքը, փորը պատին է կպցնում և սպասում է անծանօթի առաջ անցնելուն, և, ի հարկէ, վերջը նրա ետեից գաղտագողի հայեացքներ է արձակում....»

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Աւազակութեան մի դէպք պատահեց այս քանի օրերս։ Երեք օր առաջ Իգդիրցի մի պարոն, մի քուրդի հետ ապրանք է տանում սարերը վաճառելու համար. սրանք ճաշից յետոյ դուրս են գալիս Իգդիրից և ճանապարհ ընկնում դէպի սարերը. 15—17 վերստ Իգդիրից հեռու Գիւլլուգ թրքաբնակ գիւղում սրանց հետ միանում են 4 քիւլլուգցի թուրքեր։ Ճանապարհին հանգստանալու համար ճանապարհորդները իջնում են մի աղբիւրի մօտ. աղբիւրի մօտ նստած են լինում երկու թուրք ևս։ Իգդիրցի պարոնը իր վրա ունենում է մի բէվոլվէր և մի խէնջար, իսկ քիւրդը ոչինչ չէ ունենում։ Երբ հանգստանալուց յետոյ հայ երիտասարդը ուզում է ձի նստել, թուրքերը բռնում են նրա թևերը ետեից և աշխատում են զէնքերը խլել։ Երկար դիմադրութիւնից յետոյ վերջապէս զէնքերը խլում և հային ու քուրդին կապոտում, ու ապրանքը ժողովելով՝ ուզում են փախչել։ Հայը տեսնելով, որ թուրքերը ապրանքով են զբաղված, քիւրդին մօտ է կանչում և պատւիրում է իր ձեռքի պարանը ատամով կտրել։ Երբ հայը ազատվում է, բաց է անում քիւրդի կապանքները և միասին փախչում են. թուրքերը ընկնում են սրանց ետեից, խէնջարի 3 հարուած են տալիս հայի գլխին, և որովհետև լուսանալու մօտն է լինում, թուրքերը չտապում են ապրանքը տանել. փախչողները կարողանում են դրանց հետքը գտնել։ Լուրը հասնում է գաւառապետին, որը երկրորդ օրը մարդիկ առած գնում է Գիւլլուգ գիւղը գողերին գտնելու։ Երկար մանդալուց յետոյ վիրաւոր երիտասարդը գտնում է երկուսին, որոնցից մէկը մատնում է միւս երկու ընկերներին էլ։ Վաղուց է, որ դրանք պտըտում են թալանելու նպատակով. նրանք Մալաքլու գիւղից գողացել են եզներ և այս ապրանքներն ու եզները պիտի տանէին Պարսկաստան։ Ապրանքն ու ձիերը, ասում են, մօտ 500 ռուբլ արժեն։ Հետախուզութիւնը չէ դադարել։»

—

ԱՐԴՈՒԻՆԻՑ մեզ գրում են. «Հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել պ.պ. Կովալէվսկիի և Մարկովի հեղինակած «На горахъ Арарат-скихъ» անունով գրքի մասին։ Դրանք անցեալ տարի Մասիս սարերի վրա կատարած ճանապարհորդութիւնից վերադառնալով, անցել են Արզուինի գաւառից և գեղեցիկ գոյներով նկարագրել են Արզուինը։ Վերոյիշեալ գրքի 292 երեսում գրված է. «Երկարատև, տաք ամառվայ շնորհով Արզուինի բնակիչները մի տարվայ ընթացքում աջողում են քաղել երկու հունձ և սիմինդրից յետոյ ցանում են, առհասարակ գարի։ Ենթադրելով թէ երիտասարդ հեղինակները զուրկ չեն երկրագործական տեղեկութիւններից, կարծում ենք, որ այդ ֆրազայում նրանք ակամայ են սխալվել. Արզուինում երբէք սիմինդրից յետոյ չեն ցանում գարի (ինչպէս ամեն տեղ) այլ գարիից յետոյ սիմինդր։ Խօսելով ազգաբնակութիւնների մասին, գիրքը ասում է թէ Արզուինում վրացի ազգաբնակութիւն կայ։ Արզուինում վրացի բնաւ չը կայ, բացի վրացախօս իսլամներից, որոնք հնուց վրացիների հարեան լինելով, ձեռք են բերել այդ լեզուն, կամ եթէ կրօններն են փոխել, նրանք ամենևին վրաց ազգութեան ոգին չեն պահպանած, և չեն ճանաչում ցեղ, հայրենիք. նրանք ձուլված են իսլամութեան վարդապետութեան մէջ, նման այն հայ-կաթոլիկների, որոնք ձուլված են լատինականութեան մէջ, և կոչվում են բացառապէս «թուրք»։ Կան մի քանի վրացի օտարերկրացի ծառայողներ, որոնք կարող չեն «ազգայնութիւն» կազմել Արզուինում։ Հեղինակը «հայ-կաթոլիկներին» էլ մասնաւոր ազգի տեղ է դնում և բաց է թողնում «հայ-լուսաւորչականներին», թէև այդպէս չը պէտք է լինի, այլ սոսկ «հայ» պիտի ասել, իսկ յետոյ կրօնների բաժանել։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԻՏԷ ԿՂԶՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Կրիտէ կղզին ներկայումս քաղաքական շարժումների ասպարէզ է դարձել։ Ազգաբնակութիւնը դժգոհ իր վիճակից և կառավարութիւնից, մի քանի ժամանակից ի վեր վճռական բնաւորութիւն ունեցող ցոյցեր է անում։ Այդ տեսակ ցոյցերը, իսկապէս, Կրիտէ կղզու վրա նորութիւններ չեն. դրանք սկիզբն են առել շատ տարիներից առաջ, կրկնվել են շատ անգամ, կրկնվում են և այժմ, և կը կրկնվեն անկասկած ապագայում էլ, եթէ ազգաբնակութեան դժգոհութեան պատճառները չը վերանան, և նրանց մի քանի արդարացի պահանջներին լիութիւն չը տրվի։ Այդ լիութիւնը և բաւականութիւնը պէտք է Թիւրքաց կառավարութիւնը տայ, որը խառնակութիւններ ծագած դէպքերում մարդիկ է ուղարկում կղզին, մի քանի ծրագիրներ է կազմում, ցանկութիւն է յայտնում բաւարարութիւն տալու ժողովրդին...—Բայց միշտ մի և նոյն հետևանքն է դուրս գալիս,—այն է, որ ոչինչ չոչափելի բաւականութիւն Կրիտէ կղզու ժողովրդին չէ տրվում, և այդ պատճառով խառնակութիւնները պարբերաբար կրկնվում են։

Վերջին խառնակութիւնների առիթով Թիւրքաց կառավարութիւնը Կրիտէ ուղարկեց Մահմուդ փաշային, որը պէտք է տեղեկանար ազգաբնակութեան պահանջներին, քննէր դժգոհութիւնների պատճառները, և մի մանրամասն զեկուցում տար Սուլթանին՝ մի որ և է փոփոխութիւն անելու համար։ Ցարաբաղդաբար, փաշան չը կարողացաւ հաշտութիւն կայացնել կղզու բընակիչների հետ, չը կարողացաւ աջող կերպով իրագործել իր միսիան, և վերադարձաւ Կ. Պոլիս այնպիսի զեկուցումով, որը ոչինչ բարեփոխութիւնների հիմք դառնալ չը կարողացաւ։

Եւ ահա այդ պատճառով Կրիտէի խառնակութիւնները ոչ թէ չեն անցնում, այլ նոյն իսկ աւելի բուռն կերպարանք են ստանում։ Այդ հանգամանքը ուշադրութեան արժանի է և այն պատճառով, որ այդ բոլոր շարժումների մէջ կայ քաղաքական տարր ևս, և օտար մի քանի պետութիւններն առանձին եռանդով հետևում են Կրիտէի շարժումներին։ Կարծիք կայ մինչև անգամ, որ Կրիտէի խառնակութիւնների գլխաւոր պատճառը արտաքին քաղաքական հանգամանքներն են. ենթադրում են, որ մի քանի պետութիւնների մասը խառն է այդ գործում, ինչպէս օրինակ Յունաստանի, Անգլիայի և այլն։ Նոյն իսկ այս օրերս լորդ Սալսբրի, մի ճառի մէջ խօսելով Կրիտէի մասին, այն միտքն է յայտնել, որ Կրիտէ երբ և իցէ պէտք է բաժանվի Թիւրքիայից։ Եթէ այդպէս է անգլիական մինիստրութեան ղեկավարի կարծիքը, ինչ կասկած, Կրիտէի գործը չուտով չի հանդարտվի, երբ մանաւանդ քաղաքական արտաքին հանգամանքների հետ միացել են ազգաբնակութեան ներքին պահանջները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հռօմից հեռագրում են, որ քաղաքական մի քանի գործերի համար մինիստր Նախագահ Կրիսպի մտադիր է մօտաւորապէս մի ամսից յետոյ այցելել իշխան Բիսմարկին։

—Բուշչուկում տեղի են ունեցել խառնակութիւններ։ Վիէննայում ստացված տեղեկութիւններին նայելով, այդ խառնակութիւնները թեթև կերպարանք ունեն։

—Պարիզից գրում են, որ այնտեղ թէև յունաց թագաւորի գալուն ոչինչ քաղաքական կերպարանք չը տուեցին, բայց և այնպէս կառավարական բարձր շրջաններում նրան ընդունել են բաւական քաղաքավարի կերպով և յարգանքով։

—Լօնդօնից հեռագրում են, որ լօրդերի ժողովը երրորդ ընթերցանութեամբ ընդունել է այն բիլլը, որով առաջարկվում է հաստատել երկրագործութեան առանձին մինիստրութիւն։

—Սոֆիայից Լօնդոնի լրագիրներին հեռագրում են հետևեալ նորութիւնը։—Միլանը այն միտքն է յայտնել, որ ինքը գուցէ նորից ձեռք կառնի Սերբիայի կառավարութեան ղեկը՝ մի քանի վտանգներից Սերբիան ազատ պահելու համար...

—Լուր կայ, որ գերմանական այժմեան կայսրի տատը, կայսրուհի Աւգուստա, կաթոլիկութիւն է ընդունում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յուլիսի։ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչ երէկվան օրը լաւ անցկացրեց։ Ոյժերը աւելանում են—«Journal de St.-Petersbourg» լրագիրը, խորհրդածութիւններ անելով ընտրութիւնների հետևանքների մասին Ֆրանսիայում, նկատում է, որ հետևանքները շատ փառաւոր չեն բուլանժեանների համար և որ բուլանժեան ցոյցը նշանաւոր քաջագործութիւններին յատուկ տպաւորութիւնը չունեցաւ։

Կ. ՊՕԼԻՍ, 19 յուլիսի։ Մինիստրների խորհուրդը վճռեց ուղարկել Կրիտ մի նոր յանձնաժողով Եամինի նահանգապետ Ռիզա-փաշայի նախագահութեամբ և 8 զօրագունդ։

ԼՕՆԴՕՆ, 19 յուլիսի։ Լօրդերի ժողովում Սալիսբրի բոլգարական գործերի վերաբերութեամբ

որ և է գործի համար գանգատվելու իրաւունք ունի միմիայն մարդու թոյլտուութեամբ։ Կինը առանց մարդու թոյլտուութեան կարող է գանգատվել մարդու դէմ միմիայն այն ժամանակ, երբ մարդը արդէն վատնել է կնոջ ամբողջ կարողութիւնը.... Սակայն ինչ հարկ կայ գանգատվել այն բանի վերաբերմամբ, որը արդէն գոյութիւն չունի.... Օրէնքը այն աստիճան զրկում է պակված կնոջ ամեն տեսակ մարդկային իրաւունքներից, որ ոչինչ զարմանալու բան չը կայ եթէ կինը, առհասարակ, նախապատվում է սեռական ազատ կապերը (անհարազատ կենակցութիւն) քան թէ օրինական ամուսնական կեանքը։ Այդպիսով օրէնքն ինքն հարկադրում է, քաջալերում է կնոջը անբարոյական լինել.... Ֆրանսիական քաղաքացիական օրէնսդրութիւնը լի է հակասութիւններով. կինը իր ամբողջ կեանքը մի տեսակ անչափահաս էակ է համարվում, սակայն երբ մարդը պէտք է ծախի կամ գրաւ դնի իր կնոջ կալուածքը,—նա պէտք է իր կնոջ համաձայնութիւնն ու ստորագրութիւնն ունենայ.... Իսկապէս ինչ իրաւաբանական նշանակութիւն ունի մի իրաւազուրկ էակի ստորագրութիւնը.... Մի բանում միայն կնոջ և մարդու իրաւունքները հաւասար են, այդ այն դէպքում, երբ ծնողների համաձայնութիւնն է պահանջվում իգական անչափահաս զաւակի ամուսնութեան համար. այդտեղ թէ հօր և թէ մօր համաձայնութիւնը անհրաժեշտ է հաւասարապէս։ Ցաւոնի է որ կինը շատ ընդունակ է առևտրական գործունէութեան, կանայք կառավարում են ամբողջ առևտրական տներ, կանայք վարում են գործարանների տնտեսական մասը, կանայք ճշգրութեամբ պահում են այլ և այլ հաստատութիւնների գրքերը, կասսան և այլն։ Կինը մեծ մասամբ իր տան տնտեսութեամբ զբաղված, իր մարդու դրամական հաշիներն էլ է պահում։ Սակայն կինը իրաւունք ունի առևտրով պարապել միմիայն երբ աղջիկ է, կամ այրի է, իսկ պակված կինը մարդու կամայականութիւնից է կախված. եթէ մարդը համաձայնութիւն չը տայ իր կնոջը առևտրով պարապելու, կինը իրաւունք էլ չունի որ և է առևտրական գործ սկսելու։ Վերջապէս մի քանի խօսք կնոջ բարոյական իրաւազուրկ դրութեան մասին։ Երբ մի բանւոր պատահմամբ մի մուրճ է վայր գցում մի անցորդի գլխին,—նա պատժվում է. երբ ձիավարը պատահմամբ վայր է գցում կառքից ճանապարհորդին,—նա օրէնքով պատժվում է։ Բայց երբ մի աղամարդ հրապուրում, գայթակղեցնում է մի աղջկան, երբ մի դօն-ժուան, մի լովելաս դժբաղդացնում է մի օրիորդին, նրան մայր է դարձնում, և ստիպում է նրան իր ձեռքի աշխատանքով պահել իր անհարազատ զաւակին,—այդ տեսակ չարագործը օրէնքով չէ պատժվում և օրէնքը դրանով ի արդարացնում նրան, որ աղջիկը բաւական հասակ ունէր, ուրեմն և բաւական հասկացողութիւն ունէր այսպէս թէ այնպէս վարվելու.... այդպիսով այդ ընդհանրապէս իրաւազուրկ էակը յայտնի դէպքերում, օրէնքի տեսակէտից, ինքն պիտի պատասխանատու լինի իր արածի համար....

Դասախօսը աւարտեց իր խօսքը, ասելով որ թէև առհասարակ անհրաժեշտ է, որ կինը մարդու պաշտպանութիւնը վայելէ, բայց կինը չը պէտք է համարվի ստրուկ, իրաւազուրկ և անընդունակ արարած։ Եւ ամեն անգամ երբ կինը մարդկային հասարակութեան մէջ աւելի մեծ, աւելի ընդարձակ իրաւունքներ էր ստանում, քիչ թէ շատ հաւասարվելով տղամարդկանց հետ,—հասարակական բարք ու վարքերը մաքրվում էին, հասարակական բարոյականութեան մակերեոյթը բարձրանում էր։

Հետևեալ օրերը կոնգրէսը շարունակեց իր նիստերը։ Իւրաքանչիւր օր, ժամը 3-ից սկսած այլ և այլ զեկուցումներ էին ներկայացվում զանազան երկիրներում գոյութիւն ունեցող հաստատութիւնների մասին, որոնք ղեկավարվում են կանանց ձեռքով, իսկ առաւօտեան ժամը 9-ից սկսած վիճաբանութիւններ էին լինում նախընթաց օրվայ կարդացած զեկուցումների մասին։

Կոնգրէսի բացման օրը, յուլիսի 12-ին, երեկոյեան 9 ժամին, Պարիզի պրեֆէկտը հրաւիրեց մեզ, կոնգրէսի բոլոր անդամներիս, իր ընակարանը, որը զետեղվում է Լուվրի պալատում։ Այդ ընդունելութիւնը և երեկոյթը Լուվրի պալատի pavillon de Flore ասված մասում ես կը նկարագրեմ իմ հետևեալ թղթակցութեանս մէջ։ Նմանապէս կը խօսեմ այն զեկուցումների մասին, որոնք կարդացվեցան կոնգրէսի ժամանակ, ի հարկէ նրանցից միայն ամենանշանաւորները յիշելով։

Կանանց կոնգրէսի տեսողութեան ժամանակ չարունակում էի այցելել ցուցահանդէսը, բայց առժամանակ ստիպված եմ ընդմիջել իմ թղթակցութիւններս ցուցահանդիսի մասին։

Բացի իմ արդէն նկարագրած բաժիններից, այցելեցի մեքենաների պալատը (Palais des machines) և նմանապէս Պարիզի մունիցիպալիտետի (քաղաքային վարչութեան) վերին աստիճանի հետաքրքիր բաժինը, որը զետեղված է ցուցահանդէսի գլխաւոր շինութեան փառաւոր մուտքի առջև գտնվող երկու պավիլիոններում, որոնք կրում են Pavillon de Paris անունը։ Այդտեղ կարողացայ քիչ թէ շատ ծանօթանալ և Պարիզի ու Ֆրանսիական դաւառների իգական և արական արհեստաւորաց դպրոցների արդիւնքների ու նրանց վիճակի հետ։ Պարիզի իգական բարձրագոյն արհեստաւորաց քաղաքային դպրոցների գործունէութեան նկարագիրը (écoles professionelles superieures des jeunes filles tenues par la municipalité de Paris) կը կազմի առանձնապէս իմ առաջիկայ թղթակցութիւններից մինի նիւթը։

Գրիգոր Արծրունի

ասեց, որ արևելեան հարցը այն ժամանակ աւելի շուտով և խաղաղ լուծումն կը ստանայ, երբ այդ հարցով հետաքրքրվող պետութիւնները չեն խրախուսի ցաւալի տարաձայնութիւնները և որ Ռուսաստանը իր գործողութիւններով կատարելապէս արդարացրեց իր խաղաղասիրական յայտնութիւնները։ Համայնքների ժողովը առաջին ընթերցանութեան ժամանակ, առանց ձայնաւորութեան, ընդունեց պրինցներին ռոճիկ տալու բիլլը։ Ազատամիտ Սաորէյ յայտնեց, որ ինքն հակառակ կը լինի բիլլին դրա քննութեան յաջորդ փաղիսներում։ Կրիտէի գործում չահ ունեցող բոլոր կուսակցութիւններին Անգլիան պարզ հասկացնել տուեց, որ բրիտանական կառավարութիւնը ամենամեծ նշանակութիւն է տալիս այն բանին, որ սրանից յետոյ ևս Կրետ կղզին Օսմանեան կայսրութեան մի մասը մնար։ Սուդի նաւահանգիստն եկաւ բրիտանական պատերազմական «Florless» նաւը և շուտով մէկ ուրիշն էլ կը գայ։ Բրիտանական նաւերին բացառապէս պատուիրված է խառնակութեան դէպքում պաշտպանել բրիտանական հպատակների կեանքն ու կայուածքը։

ՊԱՐԻԶ, 19 յուլիսի։ Ցունաց թագաւորը ուղևորվեց դէպի Կոպէնհագէն։ Պարիզ ժամանեց պարսից Շահը։—Ի նկատի ունենալով Կրիտէի վրա եղած յուզմունքները և ուրիշ պետութիւնների օրինակին հետևելով, Ֆրանսիան հրամայեց զրահակիր «Seignelav»-ին և «Pètrelle» նաւին գնալ Կրիտ կղզին ֆրանսիական շահերը պաշտպանելու համար։

ՎԻԼՀԵԼՄՍԳԱՖԷՆ, 19 յուլիսի։ Այսօր Վիլհելմ կայսրը «Hohenzollern» նաւով ճանապարհ ընկաւ դէպի Անգլիա։

ԲԷԼԳՐԱԴ, 19 յուլիսի։ Կառավարութիւնը յայտնեց Նատալիա թագուհու Սերբիա գալու անհրաժեշտութեան մասին և Միլանին առաջարկեց զիջանել Նիշում իր ունեցած պալատը թագուհու բնակութեան համար, ուր թագաւորը կարողանար ժամանակ՝ առ ժամանակ տեսակցել մօր հետ։ Միլան պատասխանեց, որ սկզբունքով իրաւունք չունի ընդդիմանալ թագուհու վերադարձին, բայց որ ինքն, բացի սահմանադրութեան 72 յօդուածից, գրաւոր պայման ունի խնամակալների հետ, որով մայրը կարող է տեսակցել որդու հետ միայն արտասահմանում և միայն այն քաղաքներում, որտեղ կը թոյլատրի հայրը։ Միլանը, սակայն, պատրաստ է զիջանել միայն այն պայմանով, որ կառավարութիւնը գրաւոր կերպով ընդունէ ապահարզանի փաստը։ Կառավարութիւնը մերժեց այդ առաջարկութիւնը։ Այսօր երեկոյեան Միլան կը վերադառնայ Վրանիից։

ԼՕՆԴՕՆ, 19 յուլիսի։ Երրորդ օրը և այսօր անգլիական բանկը մտան մեծ գումարներ ֆրանսիական ոսկէդրամներով։ Երէկ նոյն բանկից դուրս բերեցին 259,000 ֆունտ ստէրլինգ նոյն ոսկէդրամներով։

ՎԻԷՆՆԱ, 19 յուլիսի։ Այսօր երեկոյեան $1^1/_2$ ամսով Օստէնդէ է գնում թագաժառանգուհի Ստեֆանիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի։ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի քունը և ախորժակը բաւարար դրութեան մէջ են։ Թէ ցերեկը և թէ գիշերը հանգիստ անցկացրեց։

ԼՕՆԴՕՆ, 20 յուլիսի։ Երէկ ճաշի ժամանակ Սալիսբրի կառավարութեան կողմից ասեց, որ Անգլիան չէ ձգտում Կրիտէն տիրապետել, և որ Անգլիան չի հեռանայ Եգիպտոսից, մինչև որ նա կարող չի լինի պաշտպանվել ներքին և արտաքին թշնամիներից։ Ապա Սալիսբրի պաշտպանեց այն միտքը, որ իբրև թէ Անգլիան կարող է արևելեան Եւրոպայի անցքերին անտարբեր կերպով վերաբերվել. Անգլիան չէ կարող ձեռք վերցնել իր երկարամեայ քաղաքականութիւնից, որի գլխաւոր նպատակն է պաշտպանել խաղաղութիւնը, բայց այն պայմանով, որ դրա համար հարկ չը լինի զոհել իր պատիւը։ Եւրոպայի հրսկայական զինուորական պատրաստութիւնները խաղաղութեան գրաւական են. նրանք կոտրում են պետական մարդկանց ցանկութիւնը պատերազմ սկսելու, որը կարող է յաղթվող կողմի ոչնչանալովը վերջանալ։

ՊԱՐԻԶ, 20 յուլիսի։ Բուլանժէ հրաժարվեց թեկնածու լինել այն տեղերում, ուր լինելու են կրկնաքուէարկութիւններ։

ԱԹԷՆՔ, 20 յուլիսի։ Կրիտէի ժողովը զիմեց մի հրաւէրով համայնականութեանը, պահանջելով նրա աջակցութիւնը՝ ազգային ձգտումները իրագործելու համար։ Ժողովը յայտնել է, որ զրութիւնը շատ վտանգաւոր է։ Այդ հրաւէրը մեծ տպաւորութիւն է գործել։ Մի քանի լրագիրներ խորհուրդ են տալիս քննել այն միջոցները, որոնցով կարելի է օգնել կրիտացիներին։

ՊԱՐԻԶ, 20 յուլիսի։ Բուլանժէ հրատարակեց մի պրոկլամացիա, որի մէջ չնորհակալութիւն է յայտնում ընտրողներին, և յայտարարում է, որ եթէ աջողութիւնը կատարեալ չէր, դրա պատճառը տեղական փառասիրութիւնն է, բայց նա մեծ հաւատով սպասում է պարլամենտական ընտրութիւնների հետևանքներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի։ Այսօր Պետերբուրգ կը ժամանէ Մեծ Իշխան Պետր Նիկոլաևվիչի հարսնացուն։ Պսակադրութիւնը կը կատարվի յուլիսի 25-ին Պետերգոֆի Մեծ պալատի եկեղեցում։ Երեկոյեան պսակադրութիւնից յետոյ նորապսակները կերթան Պետերգոֆի մօտ գտնվող Զնամենսկոյե գիւղը։

ԲԷԼԳՐԱԴ, 21 յուլիսի։ Միլանի և կառավարութեան մէջ համաձայնութիւն կայացաւ, որով Ալէքսանդր թագաւորի տեսակցութիւնը մօր հետ նշանակված է օգոստոսի սկզբին Քիչինիովում կամ Ռումինիայում, թագուհու հայեցողութեան համեմատ։

Ժամանակաւոր խմբագիր Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ
Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ
կամ
ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶԿԱՆԱՆՑ

Այս գիրքը, որ ֆրանսիական ակադէմիայի անդամ և անուանի հեղինակ Էրնէսթ Լէգուվէի երկասիրութիւններից առաջինն է, թէ Ֆրանսիայի և թէ արևմտեան Եւրոպայի մէջ մեծ հռչակ է հանել։ Բարեյիշատակ հանգուցեալ տիկին Թագուհի Մելիք-Ազարեանցը թարգմանել է սորան հայերէն լեզուով, իսկ նորա ամուսին պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցի հրատարակութեամբ տպագրուած է այսօր։ Գրքի սկզբում դրված է վաղամեռիկ տիկնոջ որդեկորոյս հօր-Ֆերենցի յառաջաբանը, իսկ գրքի ճակատին—թարգմանչուհու դրաւիչ լուսանկարը։ Գիրքը բաղկացած է 500 երեսից, մանրատառ մաքուր տպագրութիւն, և արժէ՝ Պոլիս 15 դահեկան, Թիֆլիզ 1 ր. 50 կոպ. ճանապարհի ծախքով հանդերձ։ Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

3—5

ԲԱՇԽԱՊԵՏ Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (*Թիֆլիսեցի*) տեղափոխվելով Մանգլիս ամարանոցը, մինչև սեպտեմբեր ամիսը հիւանդներին ընդունում է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, Պրօտուգալովկա, տուն Վասիլ Դուտովի։

4—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիզօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նադորնայա փողոցների անկիւնում, գեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծօվիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

4—20 (Ե. Շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Հինգշաբթի, օգոստոսի 3-ին, ԱՐՄԷՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմզոզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալերէում, № 114.

(22 և 29) 1—2

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ
31-ն Յուլիսի 1889

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բաղուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	123,643—75	103,230—03	226,873—78
2. Ընթացիկ հաշիւ պետական բանկ. բաժնում.	491—96	190,000 —	190,491—96
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ	2,525,109—89	893,366—26	3,418,476—15
4. Զեղչումն մուրհակաց մէկ ստորագրութեամբ, ապահոված ապրանքներով	— —	— —	— —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	34,240—84	5,961 —	40,201—84
6. Փոխատուութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,040,383—24	283,889 —	1,324,272—24
բ) » ոչ ապահ. » »	164,828 —	7,360 —	172,188 —
գ) ապրանքների	34,012 —	34,300 —	68,312 —
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	500 —	500 —
7. Բանկի պահանջալ տոկոսաբեր թղթեր.	360,018—50	20,133—39	380,151—89
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	33,637—79	— —	33,637—79
9. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	3,544,407—45	— —	3,544,407—45
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	3,709,633—26	— —	3,709,633—26
10. Բաժնի հաշիւը կենտրօն. վարչութեան հետ.	1,091,114—64	— —	1,091,114—64
Կենտրօն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	— —	512,075—49	512,075—49
11. Բողոքուած մուրհակներ	6,094—10	— —	6,094—10
12. Պայմանաժամը անցուցուած փոխատուութիւններ	8,480 —	4,906 —	13,386 —
13. Ընթացիկ ծախսեր	24,998—77	8,088—81	33,087—58
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,215—36	2,520—39	5,735—75
15. Յետ ստացուելիք ծախսեր	12,987—57	1,510—85	14,498—42
Ր. Ա.	12,717,297—12	2,067,841—22	14,785,138—34

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բաղուի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	165,571—28	— —	165,571—28
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	1,754,734 —	104,417 —	1,859,151 —
բ) ց'Պահանջ	193,112 —	25,380 —	218,492 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	799,565—87	485,426—11	1,284,991—98
» » պայմանաւոր.	— —	183,466—04	183,466—04
4. Զեղչումն մուրհակաց պետական բանկայի Թիֆլիսի բաժնում	328,963—19	— —	328,963—19
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի Թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.	323,159—67	— —	323,159—67
6. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	3,462,296—97	— —	3,462,296—97
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	3,948,319—87	— —	3,948,319—87
7. Բաժնի հաշիւը կենտրօն. վարչութ. հետ.	— —	1,165,580—10	1,165,580—10
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժնի հետ.	499,098—41	— —	499,098—41
8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 82, 83, 84, 85, 86, 87, 88 թ.	3,646—10	— —	3,646—10
9. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց	59,513—97	10,729—24	70,243—21
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	136,669—60	75,525—03	212,194—63
11. Փոխանցիկ գումարներ	42,646—19	17,317—70	59,963—89
12. Արդիւնք	— —	— —	— —
Ր. Ա.	12,717,297—12	2,067,841—22	14,785,138—34

Дозволено цензурою, Тифлисъ 21 Іюля 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.